

(77-78) Երկրի բնակչության թիվը 90 000 է, բնական աճի գործակիցը՝ 15 ‰: Տարվա ընթացքում ներգաղթը կազմել է 1800 մարդ, արտագաղթը՝ 700 մարդ.

## ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2013

77 Որոշել բնակչության բացարձակ բնական աճը:

## ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

78 Որոշել բնակչության թիվը մեկ տարի անց:

### ԹԵՍՏ 8

Խմբի համարը

Նստարանի համարը

(79-80) Գետի լայնությունը 5 մ է, միջին խորությունը՝ 80 սմ, ջրի արագությունը՝ 2 մ/վ.

79 Որոշել գետի ծախսը:

### Հարգելի՛ դիմորդ

Առաջադրանքները կատարելիս յուրաքանչյուրից պետք է ընտրել այն տարբերակը, որը Ձեր կարծիքով ճիշտ պատասխանն է, և պատասխանների ձևաթղթի համապատասխան մասում կատարել նշում:

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանքի պահանջը և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:


80 Որոշել գետի հոսքը 3 ժամում:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: **Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:**

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորի ճշտությունը:

Ցանկանում ենք հաջողություն:

1 Նկարում Ա տառով նշված է.



- 1) մագմային օջախը
- 2) հրաբխի մղանցքը
- 3) լավային հոսքը
- 4) հրաբխի խառնարանը

2 1 : 80 000 մասշտաբի քարտեզում երկու կետերի միջև հեռավորությունը 6 սմ է: Դրանց միջև իրական հեռավորությունը կլինի.

- 1) 48 կմ
- 2) 480 կմ
- 3) 4800 կմ
- 4) 4,8 կմ

3 Աշխարհագրական լայնությունները լինում են.


- 1) 0°–180°
- 2) 0°–270°
- 3) 0°–360°
- 4) 0°–90°

4 Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Դեկտեմբերի 22-ի կեսօրին Արեգակը լինում է զենիթում հս. լ. 23° 30' գուգահեռականի վրա:
- 2) Մեպտեմբերի 23-ին Արեգակի ճառագայթներն ուղղահայաց են ընկնում հյուսիսային բևեռային շրջագծի վրա:
- 3) Մարտի 21-ին Արեգակի ճառագայթներն ուղղահայաց են ընկնում հասարակածի վրա:
- 4) Հունիսի 22-ի կեսօրին Արեգակը լինում է զենիթում հվ. լ. 23° 30' գուգահեռականի վրա:

75 Քարտեզում ՀՀ հողային ո՞ր տիպն է նշված Ա տառով.


- 1) անապատակիսաանապատային
- 2) աղուտ-ալկալի հողեր (աղուտներ)
- 3) լեռնային սևահողեր
- 4) կուլտուր-տոռգելի հողեր



76 Մարզի ապահովվածությունը ածխի պաշարներով կազմում է 60 տ/մարդ, ածխի պաշարները՝ 2 400 000 տ: Որքան կլինի մարզի բնակչության թիվը:

Քարտեզում ո՞ր ռասայի տարածման շրջաններն են պատկերված Գ տառով.

- 1) մոնղոլոիդ
- 2) եվրոպեոիդ
- 3) ավստրալոիդ
- 4) նեգրոիդ



5

Արտածին ուժերի ազդեցությամբ Երկրի մակերևութային ապարների քայքայման, մանրացման և վերափոխման երևույթը կոչվում է.

- 1) լեռնագոյացում
- 2) կուտակում
- 3) հողմահարում
- 4) տեղատարում

6

Բացարձակ խոնավության հարաբերությունը խոնավության այն քանակին, որն անհրաժեշտ է տվյալ ջերմաստիճանի օդը հագեցնելու համար, կոչվում է.

- 1) հարաբերական խոնավություն
- 2) միջին խոնավություն
- 3) նվազագույն խոնավություն
- 4) առավելագույն խոնավություն

7

Երկու ջրային ավազաններն իրար միացնող ջրային նեղ տարածությունը կոչվում է.


- 1) նեղուց
- 2) ծով
- 3) փողրակ
- 4) ծովածոց

8

Մեծ Արարատի բացարձակ բարձրությունը 5165 մ է, Արարատյան դաշտինը՝ 850 մ: Մեծ Արարատի հարաբերական բարձրությունը կլինի.

- 1) 5823 մ
- 2) 4547 մ
- 3) 6015 մ
- 4) 4315 մ


9 Ո՞ր քամիներն են պատկերված.



- 1) պասսատներ
- 2) մուսսոններ
- 3) լեռնահովտային քամիներ
- 4) բրիզներ

10 Նկարում ո՞ր թվով է նշված օդի ջերմաստիճանի տարեկան ընթացքի կորը հասարակածային լայնություններում.

- 1) 2
- 2) 3
- 3) 4
- 4) 1



11 «Օվկիանոս — ծով» գույգերից ընտրել ճիշտը.

- 1) Ատլանտյան — Կարայի
- 2) Հնդկական — Կարմիր
- 3) Հյուսիսային սառուցյալ — Բերինգի
- 4) Խաղաղ — Բարենցի

70 Արդյունաբերական ձեռնարկությունների արտանետումների հետևանքով առավել աղտոտված բնակավայրեր են.

- 1) Ջերմուկը և Դիլիջանը
- 2) Չարենցավանը և Արմավիրը
- 3) Վեդին և Մալիտակը
- 4) Արարատը և Ագարակը

71 Վառելիքաէներգետիկ ռեսուրսներով աղքատ են.

- 1) ԱՄՆ-ը և Մեծ Բրիտանիան
- 2) Ռուսաստանը և Չինաստանը
- 3) Իրանը և Ղազախստանը
- 4) Ճապոնիան և Իտալիան

72 Հակաերոզիոն միջոցառում չէ.

- 1) հողերի վերակուլտիվացիան
- 2) առաջավոր ագրոտեխնիկան
- 3) գենոֆոնդի պահպանումը
- 4) հողաբարելավումը

73 Կենսաբանական աղտոտիչ է (են).

- 1) բակտերիաները
- 2) ջերմությունը
- 3) էլեկտրամագնիսական դաշտը
- 4) վիրբացիան

65 **Ո՞ր պնդումն է ճիշտ.**

- 1) ՀՀ մերձալպյան և ալպյան լանդշաֆտներում բարձր է Արեգակի ճառագայթային էներգիայի ինտենսիվությունը (ուժգնությունը):
- 2) ՀՀ կուլտուր-ռոտզելի հողերը տարածվում են սևահողային տափաստանների ենթագոտում:
- 3) ՀՀ անապատակիսաանապատային լանդշաֆտներն առաջացել են Արարատյան գոգավորությունում և Վայքում անտառների անխնա ոչնչացման հետևանքով:
- 4) ՀՀ անտառների վերին և մերձալպյան գոտու մարգագետինների ստորին սահմանների միջև տարածվում են չորասեր նոսր անտառները:

66 **Ո՞ր պնդումն է սխալ.**

- 1) ՀՀ-ում ամենաբարձր ջերմաստիճանը (42°) գրանցվել է Արարատյան դաշտում (Երասխ):
- 2) ՀՀ-ում ամենաշատ տեղումներ թափվում են Արագած և Կապուտջուղ լեռնագագաթներին:
- 3) ՀՀ-ում գրանցված ամենացածր ջերմաստիճանը -42,6°C է:
- 4) Տարվա ընթացքում ամպամած օրերի թիվը ամենաքիչը Մարտունիում է:

67 **Ո՞ր պնդումն է ճիշտ.**

- 1) ՀՀ ազգային փոքրամասնություններից են արաբները և ադրբեջանցիները:
- 2) ՀՀ բնակչության ամենամեծ խտության ցուցանիշով առանձնանում է Սևանի ավազանը:
- 3) ՀՀ մշտական բնակչության վերին սահմանը 2400 մ է:
- 4) ՀՀ-ն, իր հարևանների համեմատ, ամենացածր ուրբանիզացման մակարդակ ունեցող երկիրն է:

68 **ՀՀ արդյունաբերության վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.**

- 1) Վառելիքային հաշվեկշռում ամենամեծ բաժինն ունի բնական գազը:
- 2) Քիմիական արդյունաբերության խոշոր կենտրոններ են Հրազդան և Գյումրի քաղաքները:
- 3) Ալյումինի արդյունաբերությունը բացառապես օգտագործում է տեղական հումք՝ Թեժ լեռան և Շվանիձորի (Մեղրու լեռնաշղթա):
- 4) Մեքենաշինության զարգացումը պայմանավորված է սև մետաղների առկայությամբ:

69 **Ի՞նչն է ընդհանուր Գյումրի և Հրազդան քաղաքների համար.**

- 1) արդյունաբերության առաջատար ճյուղը պղնձաձուլությունն է
- 2) գործում են հզոր ջերմաէլեկտրակայաններ
- 3) գործում են ցեմենտի արտադրության խոշոր ձեռնարկություններ
- 4) երկաթուղային հանգույցներ են

12 **Ո՞ր բնական գոնային է բնորոշ ավելցուկային խոնավությունը.**

- 1) անապատների և կիսաանապատների
- 2) տունդրայի
- 3) բարեխառն գոտու տափաստանների
- 4) սավաննաների և նոսր անտառների

13 **Բնութագրումով որոշել լիճը.**

*Ամուղարյա և Միրդարյա գետերը թափվում են մնացորդային ծագման այդ լճի մեջ: Այդ գետերի ջրերը ռոտզման նպատակով օգտագործելու պատճառով լիճը ծանծաղել է: Ո՞ր լիճն է.*

- 1) Բալխաշ
- 2) Կասպից
- 3) Իսիկ Կուլ
- 4) Արալյան

14 **Ո՞ր պնդումն է սխալ.**

- 1) Ներքին շրջանների գետերը մշտական հոսք չունեն, և այստեղ շատ են չոր գետահուները՝ քրիկները:
- 2) Կենտրոնաավստրալական դաշտավայրի տարածքում է ստորերկրյա ջրերի Մեծ արտեզյան ավազանը:
- 3) Ավստրալիայի ամենախոշոր հոսուն լիճը Էյրն է:
- 4) Ավստրալիայի ներքին՝ ընդարձակ շրջանները (տարածքի 60 %-ը) հոսք չունեն դեպի օվկիանոս:

15 **Ո՞ր պնդումն է ճիշտ.**

- 1) Երկրակեղևի ամենաակտիվ, երկրաշարժավտանգ գոտիները գեոսինկլինային շրջաններն են:
- 2) Քարոլորտի սալերի և մայրցամաքների սահմանները ճշգրտորեն համընկնում են:
- 3) Քարոլորտի սալերի իրար մոտենալու և սեղմվելու հետևանքով առաջանում են ընդարձակ հարթավայրեր:
- 4) Մայրցամաքային և օվկիանոսային երկրակեղևների կառուցվածքը նույնն է:

16 **«Ծով — կղզի» զույգերից ընտրել ճիշտը.**

- 1) Կարիբյան ծով — Նյուֆաունդլենդ կղզի
- 2) Ադրիատիկ ծով — Կորսիկա կղզի
- 3) Օխոտի ծով — Սախալին կղզի
- 4) Արաբական ծով — Շրի Լանկա կղզի


17 «Հարթավայր — աշխարհամաս» գույգերից ընտրել ճիշտը.

- 1) Թուրանի դաշտավայր — Ասիա
- 2) Մերձատլանտյան դաշտավայր — Աֆրիկա
- 3) Արաբական սարահարթ — Եվրոպա
- 4) Մեծ ավազան սարահարթ — Ավստրալիա և Օվկիանիա

18 Միջերկածովային կլիման բնորոշ է.

- 1) Հարավային Ամերիկայի բարեխառն գոտու արևելյան մասերին
- 2) Ֆլորիդա թերակղզուն
- 3) Աֆրիկայի ծայր հյուսիսային մասերին
- 4) Հնդստան թերակղզու ներքին շրջաններին

19 Ո՞ր անապատն է քարտեզում նշված Գ տառով.



- 1) Թար
- 2) Տակլա-Մական
- 3) Կարակում
- 4) Գոբի

20 Ո՞ր պետությունն է քարտեզում նշված Ե տառով.

- 1) Ուզբեկստան
- 2) Ղազախստան
- 3) Տաջիկստան
- 4) Թուրքմենստան

61 Մեքենաներ և սարքավորումներ արտահանող առաջատար երկիր է.

- 1) Կանադան
- 2) Գերմանիան
- 3) Ավստրալիան
- 4) Ռուսաստանը

62 Ճապոնիայի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Ալյումինի, պղնձի, ցինկի ձուլարանները հիմնականում տեղաբաշխված են մետաղների խտանյութի ներկրման նավահանգիստներում:
- 2) Գյուղատնտեսության ճյուղային կառուցվածքում մեծ է անասնապահության բաժինը:
- 3) Հացահատիկային գլխավոր մշակաբույսը ցորենն է:
- 4) Երկրի արդյունաբերությունը գերազանցապես աշխատում է սեփական հումքային և վառելիքային ռեսուրսների հաշվին:

63 Բնութագրումով որոշել պետությունը.

*Այս պետությունն անմիջական ելք չունի դեպի Համաշխարհային օվկիանոս: Հարուստ է նավթի ու բնական գազի պաշարներով: Բնակչությունը հիմնականում պատկանում է ալթայյան լեզվաընտանիքի թյուրքական լեզվախմբին և դավանում մահմեդականության շիա ուղղությունը: Գյուղատնտեսական հիմնական մշակաբույսերն են բամբակենին, թեյը: Ո՞րն է այդ պետությունը.*

- 1) Ադրբեջանը
- 2) Թուրքիան
- 3) Իրանը
- 4) Վրաստանը

64 Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Արաքսն ունի սառցադաշտային սնում:
- 2) Հայկական լեռնաշխարհի գետերն ունեն մեծ անկում:
- 3) Տիգրիսը պատկանում է Կասպից ծովի ավազանին:
- 4) Հայկական լեռնաշխարհը պատկանում է միայն Սև և Միջերկրական ծովերի ավազաններին:

56 Հյուսիսից հարավ շարժվելիս բարեխառն գոտու անտառների զոնան փոխվում է անտառատափաստանների, որովհետև.

- 1) ձմեռները դառնում են խստաշունչ
- 2) փոխվում է ջերմության և խոնավության քանակը
- 3) հողերը ճահճանում են
- 4) ռելիեֆն աստիճանաբար դառնում է ավելի բարձրադիր

57 Աֆրիկայի մերձարևադարձային (միջերկրածովային) մշտականաչ կոշտատերև անտառների և թփուտների բնական զոնայի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Տարեկան տեղումների քանակը 600–800 մմ է, որոնց մեծ մասը թափվում է ձմռանը, իսկ հողերը դարչնագույն են կամ դեղնակարմրավուն:
- 2) Համատարած խոտածածկույթի հետ աճում են միայնակ ծառեր, որոնցից նշանավոր են բաոբաբը, միմոզան, հովհարաձև ակացիան, չորադիմացկուն արմավե նին և այլն:
- 3) Տարածվում է հասարակածի երկու կողմերում՝ ընդգրկելով Գվինեական ծովածոցի մերձափնյա շրջանները և Կոնգո գետի միջին հոսանքի ավազանը:
- 4) Բնորոշ են փշոտ բույսերը՝ ուղտափուշը, օշինդրը, աղաբույսը, փշոտ թփերը, անապատային ակացիան, իսկ հարավի անապատներին ու կիսաանապատներին՝ ծիծեռնախոտը, բարձիկանման փշոտ բույսերը և այլն:

58 Ո՞ր շարքի բոլոր աշխարհագրական օբյեկտներն են Եվրասիայում.

- 1) Միջինդանուբյան դաշտավայր, Օրիսաբա հրաբուխ, Բալխաշ լիճ
- 2) Մեծ Ավազան սարահարթ, Վերխոյանսկի լեռներ, Վերին լիճ
- 3) Չինական մեծ հարթավայր, Չագրոսի լեռներ, Վենեռն լիճ
- 4) Դեկանի սարահարթ, Էրեբոս լեռ, Լադոգա լիճ

59 Դեպի ծով ելք չունեն.

- 1) Տաջիկստանը և Մոնղոլիան
- 2) Պերուն և Բոլիվիան
- 3) Սուդանը և Անգոլան
- 4) Վիետնամը և Օմանը

60 Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) «Ժողովրդագրական պայթյունը» բնակչության թվի կտրուկ աճն է և բնորոշ է զարգացող երկրներին:
- 2) Բնակչության վերարտադրության ցուցանիշների վրա առավել մեծ ազդեցություն են թողնում սոցիալ-տնտեսական գործոնները:
- 3) Բնակչության վերարտադրության ամենաբարձր տեմպերը նկատվում են եվրոպական երկրներում:
- 4) Բնակչության վերարտադրության առաջին տիպի երկրներին բնորոշ է ցածր ծնելիությունը, ցածր մահացությունը և ցածր բնական աճը:

21 Քաղաքային և գյուղական բնակավայրերի խոշոր կուտակումը մեծ քաղաքի կամ քաղաքների շուրջը, որոնք միմյանց հետ կապված են աշխատանքային, մշակութային, կենցաղային, արտադրական և այլ կապերով, կոչվում է.

- 1) ագլոմերացիա
- 2) ուրբանիզացիա
- 3) ասիմիլյացիա
- 4) միգրացիա

22 Բնակչության վայրի ժամանակավոր կամ մշտական փոփոխության հետ կապված բնակչության տեղաշարժը կոչվում է.

- 1) բնակչության միգրացիա
- 2) բնակչության տեղաբաշխում
- 3) բնակչության բնական շարժ
- 4) տարաբնակեցում

23 Բնութագրումով որոշել պետությունը.

*Այս պետությունը հյուսիսից սահմանափակված է Հիմալայան և Կարակորում լեռնաշղթաներով: Բնակչությունը բազմազգ է և բազմակրոն: Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակով, թեյի մշակությամբ աշխարհի առաջատարներից է: Ո՞րն է այդ պետությունը.*

- 1) Չինաստանը
- 2) Պակիստանը
- 3) Ինդոնեզիան
- 4) Հնդկաստանը

24 Որոշել երկրի բնակչության թիվը, եթե այդ երկրի գյուղատնտեսական հողահանդակների ընդհանուր մակերեսը 15 մլն հա է, իսկ մեկ բնակչին բաժին է ընկնում 3 հա գյուղատնտեսական հողահանդակ.

- 1) 5 մլն
- 2) 12 մլն
- 3) 2 մլն
- 4) 18 մլն

25 «Ժողովուրդ — լեզվախումբ» գույգերից ո՞րն է սխալ.

- 1) պարսիկներ — իրանական
- 2) լեհեր — սլավոնական
- 3) քրդեր — թուրքական
- 4) ուզբեկներ — թուրքական



26

«Պետություն — կառավարման ձև» գույգերից ընտրել *սխալը*.

- 1) Նիդերլանդներ — հանրապետություն
- 2) Օման — միապետություն
- 3) Շվեդիա — միապետություն
- 4) Իրան — հանրապետություն

27

«Արդյունաբերության ճյուղ — տեղաբաշխման գործոն» գույգերից ընտրել *ճիշտը*.

- 1) ռոբոտաշինություն — հումքային գործոն
- 2) գյուղատնտեսական մեքենաշինություն — վառելիքաէներգետիկ գործոն
- 3) թեթև արդյունաբերություն — աշխատանքային ռեսուրսների գործոն
- 4) ալյումինաձուլություն — սպառման գործոն

28

Մեծ Բրիտանիայի վերաբերյալ *ո՞ր* պնդումն է *սխալ*.

- 1) Բնակչության կազմում մեծ է աշխատունակ բնակչության բաժինը:
- 2) Բնակչության մեծ մասը դավանում է քրիստոնեության կաթոլիկ և բողոքական ուղղությունները:
- 3) Ըստ պետական կարգի՝ բացարձակ միապետություն է:
- 4) Բարձր է բնակչության խտությունը:

29

Նոսր բնակեցված երկրներ են.

- 1) Գերմանիան և Ֆրանսիան
- 2) Ինդոնեզիան և Ճապոնիան
- 3) Հայաստանը և Բելգիան
- 4) Ավստրալիան և Կանադան

30

Թերակղզային երկրներ են.

- 1) Դանիան և Իռլանդիան
- 2) Իտալիան և Բսպանիան
- 3) Թուրքիան և Իրանը
- 4) Նորվեգիան և Կիպրոսը

31

«Մշակաբույս — առաջատար երկիր» գույգերից ընտրել *ճիշտը*.

- 1) սուրճ — Կոլումբիա
- 2) խաղող — Բելգիա
- 3) ցորեն — Նորվեգիա
- 4) բամբակենի — Լեհաստան

## Բ մակարդակ

51

Ո՞ր պնդումն է *ճիշտ*.

- 1) Հս. լ. 66° 30՛ գուգահեռականի վրա գիշերահավասարի երևույթը տարվա մեջ նկատվում է մեկ անգամ՝ դեկտեմբերի 22-ին:
- 2) Տվյալ պահին նույն միջօրեականի վրա գտնվող վայրերում, կախված դրանց աշխարհագրական լայնությունից, գրանցվում են տարբեր տեղական ժամանակներ:
- 3) Բնեռային շառավիղը մեծ է հասարակածային շառավղից:
- 4) Գլոբուսի վրա բոլոր միջօրեականներն իրար հավասար են:

52

Ժամը քանի՞ սը կլինի 7-րդ ժամային գոտում, եթե 4-րդ ժամային գոտում ժամը 15<sup>00</sup>-ն է.

- 1) 15<sup>00</sup>
- 2) 18<sup>00</sup>
- 3) 23<sup>00</sup>
- 4) 11<sup>00</sup>

53

Ո՞ր պնդումն է *ճիշտ*.

- 1) Մուսսոնային շրջաններում տեղումների մեծ մասը թափվում է ամռանը:
- 2) Տոռնադոն և թայֆունը արևադարձային հզոր անտիցիկլոններ են:
- 3) Կլիմայի ցամաքայնության մեծացմանը գուզընթաց ամռան միջին ջերմաստիճանը նվազում է:
- 4) Պասսատները տեղումներ են առաջացնում մայրցամաքների արևմտյան ափերին:

54

Ընտրել բնության բաղադրիչների միակ *ճիշտ* գուգորդումը.

- 1) Եվրասիա — Դանուբ — Խաղաղ օվկիանոս
- 2) Աֆրիկա — Օրանժ — Ատլանտյան օվկիանոս
- 3) Ավստրալիա — Մուրեյ — Խաղաղ օվկիանոս
- 4) Հյուսիսային Ամերիկա — Յուկոն — Հյուսիսային սառուցյալ օվկիանոս

55


Ո՞ր շարքի բոլոր կղզիները նույն օվկիանոսում *չեն*.

- 1) Հոնսյու, Կալիմանտան, Շրի Լանկա
- 2) Իսլանդիա, Իռլանդիա, Մեծ Բրիտանիա
- 3) Թայվան, Սախալին, Ֆիլիպինյան
- 4) Շախբերգեն, Նոր Երկիր, Հյուսիսային երկիր



49 Ո՞ր լեռներն են քարտեզում նշված **Բ** տառով.

- 1) Բազումի
- 2) Եղնախառի
- 3) Շիրակի
- 4) Վիրահայոց



50 Ո՞ր քաղաքն է քարտեզում նշված **Է** տառով.

- 1) Բերդ
- 2) Դիլիջան
- 3) Իջևան
- 4) Ճամբարակ

32 Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Խոզերի գլխաքանակով աշխարհի առաջատար երկիրը Ռուսաստանն է:
- 2) Անգորական այծերի գլխաքանակով աշխարհի առաջատար երկիրը Կանադան է:
- 3) Կակաոյի համաշխարհային բերքի մեծ մասն արտադրվում է Հարավային Եվրոպայի երկրներում:
- 4) Մանր եղջերավոր անասնապահությունը հիմնականում տեղաբաշխված է չորային կլիմա ունեցող և լեռնային շրջաններում:

33 Կյանքի առավել ցածր միջին տևողություն ունեն.

- 1) Նիդերլանդները և Դանիան
- 2) Մոզամբիկը և Զամբիան
- 3) Ավստրալիան և Կանադան
- 4) Ավստրիան և Բելգիան

34 Էներգետիկական հաշվեկշռում ջրէկների առավել մեծ բաժին ունեցող երկրներ են.

- 1) Նորվեգիան և Կանադան
- 2) Չինաստանը և Ֆրանսիան
- 3) Գերմանիան և Ճապոնիան
- 4) Ուկրաինան և ԱՄՆ-ը

35 Արևելյան Եփրատի վտակ է.

- 1) Բագրևանդը
- 2) Մակուն
- 3) Խրամը
- 4) Ճորոխը

36 «Գետ — դաշտ» գուգերից ընտրել *սխալը*.

- 1) Արևելյան Եփրատ — Մշո
- 2) Արևմտյան Եփրատ — Կարնո
- 3) Արաքս — Նախիջևանի
- 4) Արևմտյան Եփրատ — Բասենի

37 Ո՞ր հարթավայրն է ավելի բարձրադիր.

- 1) Ապարանի սարահարթը
- 2) Արարատյան դաշտը
- 3) Շիրակի դաշտը
- 4) Աշոցքի սարահարթը

38 Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Լեռնաչորասեր բուսականությունը տարածվում է տափաստանային և անտառային բուսականության միջև:
- 2) Անապատային-կիսաանապատային բուսականությունը տարածվում է 1200–1500մ բարձրությունների միջև:
- 3) Ալպյան և մերձալպյան բուսականությունը տարածվում է 1500–2200 մ բարձրությունների միջև:
- 4) Անտառները զբաղեցնում են ՀՀ տարածքի մոտ 10%-ը և զբաղեցնում են ՀՀ հյուսիսարևելյան և հարավարևելյան շրջանները:

39 Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) ՀՀ–ում եզդիները հիմնականում բնակվում են Արագածոտնի մարզի քաղաքային բնակավայրերում:
- 2) ՀՀ–ն ազգային կազմով աշխարհի առավել միատարր պետություններից է:
- 3) ՀՀ–ում ռուսները հիմնականում բնակվում են Արմավիրի մարզի քաղաքային բնակավայրերում:
- 4) ՀՀ–ում թվաքանակով երկրորդ ազգը ռուսներն են:

40 ՀՀ արդյունաբերության առաջատար ճյուղ չէ.

- 1) էլեկտրաէներգետիկան
- 2) ավտոմոբիլաշինությունը
- 3) շինանյութերի արդյունաբերությունը
- 4) գունավոր մետաղաձուլությունը

41 Ո՞ր բնական լանդշաֆտն է տիրապետում Արմավիրի մարզում.

- 1) չոր տափաստանային
- 2) կիսաանապատային
- 3) անտառային
- 4) տափաստանային

42 Արագածոտնի մարզի սննդի արդյունաբերության առաջատար արտադրություններն են.

- 1) ծխախոտի և շաքարի
- 2) ձեթի և մսամթերքի
- 3) հանքային ջրերի և պահածոների
- 4) գինու և կաթնամթերքի

43 Ո՞ր բարձրությունն է պտղաբուծության տարածման վերին սահմանը.

- 1) 1400 մ
- 2) 2100 մ
- 3) 2500 մ
- 4) 1000 մ

44 Ո՞ր երկիրն է համեմատաբար աղքատ անտառային ռեսուրսներով.

- 1) Իսպանիան
- 2) Բրազիլիան
- 3) Ռուսաստանը
- 4) Ինդոնեզիան

45 Հողերի աղակալման պատճառ է.

- 1) խորքային վարը
- 2) անտառապատ տարածքների կրճատումը
- 3) սելավային հոսքերը
- 4) գրունտային ջրերի մակարդակի բարձրացումը

46 Իրենց բաղադրության մեջ պարունակվող տարբեր նյութերի միջոցով մարդու օրգանիզմի վրա ցավազրկող, հանգստացնող, հակաբորբոքային ազդեցություն են ունենում.

- 1) դեղաբույսերը
- 2) կերաբույսերը
- 3) տեխնիկական բույսերը
- 4) դեկորատիվ բույսերը

47 Ո՞րն է մթնոլորտի մաքրության պահպանման միջոցառումներից.

- 1) ցեմենտի արտադրության ավելացումը
- 2) ջերմային էլեկտրակայանների թվի ավելացումը
- 3) կանաչ տարածքների ընդարձակումը
- 4) քիմիական ձեռնարկությունների թվի ավելացումը

48 Այն հիմնախնդիրները, որոնք ընդգրկում են ամբողջ երկրագունդը և մարդկությունը, սպառնում են նրանց ներկային ու ապագային՝ պահանջելով բոլոր ժողովուրդների ու երկրների գործողությունների միասնությունը, կոչվում են.

- 1) տեղական
- 2) բնական
- 3) համամոլորակային
- 4) տարածաշրջանային